ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----- ---------- 2023 թվականի N ------- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 1308-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով՝ կառավարությունը որոշում է.

1. 1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի «Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» N 1308-Ն որոշման (այսուհետ՝ «Որոշում») մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման Հավելված N 1-ում.

ա. ՌՆ4.a. կետում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը.

ա) «փամփուշտներ» բառից հետո լրացնել «, դրանց ենթազինամթերք»

բառերը,

բ) ՌՆ4.a. կետի «Նկարագիր»-ից հետո նույն հաջորդականությամբ լրացնել նոր «Հատուկ նկարագիր» հետևյալ բովանդակությամբ.

«*Հատուկ նկարագիր. ՌՆ1. կամ ՌՆ2. կետերում սահմանված զենքերի կամ հեռանետող զենքերի և զինամթերքի համար հատուկ նախագծված ենթազինամթերքների համար նռնակների կամ քարտիճի (տարողությունների) համար տե՛ս ՌՆ3. կետը։*»։

գ) ՌՆ4.b. կետի Նկարագիր 1-ի a. ենթակետից հանել «որը կարող է արտադրել օրական 1000 կգ կամ ավելի հեղուկացնող գազ» բառերը,

բ. ՌՆ10.f. կետում «*Նկարագիր.*» բառը փոխարինել «*Նկարագիր 1.*» բառերով և ավելացնել նոր Նկարագիր հետևյալ բովանդակությամբ.

«*Նկարագիր 2. ՌՆ10.f. կետը չի վերաբերում.*

1. *1. առեղներին (քարշարկման սարքավորումներին),*
2. *2. պաշտպանիչ հատակային ծածկոցներին և ծածկոցներին,*
3. *սանդուղքներին և հարթակներին,*
4. *դիմադիր կոճղակներին, կառաններին և բեռների ամրացման սարքավորումներին։*»։

գ. ՌՆ11a. կետում.

ա) Նկարագրի e. ենթակետում «ծածկագրման գործընթացներ» բառերը փոխարինել «ծածկագրման գործառույթներ» բառերով,

բ) ՌՆ11b. կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Խափանող, խաթարող սարքավորում, որը նախագծված կամ փոփոխված է «արբանյակային նավիգացիոն համակարգերի» կողմից տրվող տեղորոշման, նավիգացիայի կամ ժամանակայնության ծառայությունների ընդունմանը, կիրարկմանը կամ ճշգրտությանը խոչընդոտելու համար և դրանց համար հատուկ նախագծված բաղադրամասերը։»,

դ. ՌՆ13. կետի Նկարագիր 4-ից հետո լրացնել նոր Նկարագիր և Հատուկ նկարագիր հետևյալ բովանդակությամբ.

«*Նկարագիր 5. ՌՆ13.d.1. կետը չի վերաբերում պաշտպանիչ ակնոցներին։*

Հատուկ նկարագիր. Լազերային պաշտպանիչ ակնոցների համար տե՛ս ՌՆ17.o կետը։»։

2) Որոշման ողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության Ոստիկանություն» բառերը և վերջինիս համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն» բառերով և վերջինիս համապատասխան հոլովաձևերով։

3) Որոշման Հավելված N 2-ում.

ա. 8-րդ կետում «7-րդ կետում» բառերը փոխարինել «6-րդ և 7-րդ կետերում» բառերով,

բ. 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Լիցենզիան տրամադրում է լիցենզավորող մարմինը՝ անժամկետ։»:

4) Որոշման Հավելված N 3-ում.

ա. 6-րդ կետի 2-րդ ենթակետում «տրանսպորտային միջոցների սեփականության վկայականները» բառերը փոխարինել «տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերը» բառերով,

բ. 8-րդ կետում «7-րդ կետում» բառերը փոխարինել «6-րդ և 7-րդ կետերում» բառերով,

գ. 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Լիցենզիան տրամադրում է լիցենզավորող մարմինը՝ անժամկետ։»:

5) Որոշման Հավելված N 4-ում.

ա. 8-րդ կետում «7-րդ կետում» բառերը փոխարինել «6-րդ և 7-րդ կետերում» բառերով,

գ. 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Լիցենզիան տրամադրում է լիցենզավորող մարմինը՝ անժամկետ։»:

6) Հավելված N 5-ը շարադրել նոր խմբագրությամբ.

«

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2009 թվականի
նոյեմբերի 12-ի N 1308-Ն որոշման

<u>ՁԵՎ</u>

ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԵՎ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

ք. _____

«____» «_____» 20__թ.

Արտահանող կազմակերպության տվյալները *(իրավաբանական հասցե, հեռախոսահամար, ֆաքս, էլ-փոստ, տնօրեն),*
Ներմուծող կազմակերպության տվյալները (իրավաբանական հասցե, հեռախոսահամար, ֆաքս, էլ-փոստ, տնօրեն),
Փոխադրող կազմակերպության տվյալները *(իրավաբանական հասցե, հեռախոսահամար, ֆաքս, տնօրեն),*
Արտահանվող *(ներմուծվող)* ռազմական նշանակության արտադրանքի անվանումը, չափման միավորը, քանակը
Ռազմական նշանակության արտադրանքի վերջնական օգտագործողի մասին տվյալները:
_____ հայտարարում է, որ վերը նշված տվյալները ճիշտ են, վերը նշված ռազմ
նշանակության արտադրանքը կհանձնվի վերը նշված վերջնական օգտագործողին և չի
վերավաճառվի կամ որևէ այլ կերպ փոխանցվի որևէ այլ երրորդ պետություն և (կամ) ո
կողմի՝ առանց արտահանող երկրի լիազոր մարմնի գրավոր և պատշաճ կերպով վավե
դրական եզրակացության:
_____ հավաստում է, որ ներկայացված վերը նշված ներմուծվող ռազմական նշանա
արտադրանքը օգտագործվելու է _____ կողմից և չի փոխանցվի որևէ այլ երրորդ
(կամ) որևէ երրորդ կողմի՝ առանց արտահանող երկրի լիազոր մարմնի գրավոր և պաս
վավերացված դրական եզրակացության:
_____ հայտարարում է, որ վերը նշված ռազմական նշանակության արտադրանքը
օգտագործվելու է բացառապես _____ նպատակով:

_____ հավաստում է, որ վերը նշված ռազմական նշանակության արտադրանքը չի
վերը նշված նպատակից բացի որևէ այլ նպատակով՝ առանց արտահանող երկրի լիազ
գրավոր և պատշաճ ձևով վավերացված համաձայնության:

Ներմուծող կազմակերպության ղեկավարի ստորագրությունը և կնիքը: _____

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ Ն. Փաշինյան